ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ • ՓՈՐՁ • ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

01/01 - 1536

No 21.12.2023թ.

Սոնիկ Երիցյան Աշոտի ԱՁ
(ք. Երևան, Խաղաղ Դոնի 23-218
հեռ. 043-24-22-24,
էլ. հասցե sonericyan@gmail.com,
ՀՎՀՀ 23238517)

Ծ Ա Ն Ու Ց Ում

Պայմանագիրը միակողմանի /մասնակի/ լուծելու մասին

Հարգելի Սոնիկ Երիցյան.

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Գնորդ) և Սոնիկ Երիցյան Աշոտի ԱՁ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 15.11.2023թվականին կնքվել է N ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-23/ԷԱ-7-1 գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր), համաձայն որի Վաճառողը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով և ժամկետներում Գնորդին մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված ապրանքները: Համաձայն Պայմանագրի՝ ապրանքի մատակարարման վերջնաժամկետը ս/թ դեկտեմբերի 9-ն էր, սակայն Վաճառողի կողմից 1-ին չափաբաժինի մասով նախատեսված (Լեդ լուսամփոփ 65սմ*105սմ - 2 հատ) ապրանքները դռևս չի մատակարավել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետը, այն է Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը և Պայմանագրի 2.1.7.1-րդ կետը բ) պարբերությունը, այն է՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի, Գնորդը միակողմանի մասնակի լուծում է պայմանագիրը չմատակարարված ապրանքների մասով:

Տեղեկացնում ենք, որ Վաճառողը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900018001876 հաշվեհամարին փոխանցել 951 ՀՀ դրամ որպես տույժ՝ Պայմանագրի 6.3 կետի համաձայն: Տույժը հաշվարկված է մինչև 20.12.2023թ.:

Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարատավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանգրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և **մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:**

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում ենք՝ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում **պայմանագի կատարման ապահովման** գումարը կազմում է 25000 (քսանհինգ հազար) ՀՀ դրամ և **որոկավորման ապահովման գումարը** կազմում է 37500 (երեսունյոթ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ, որը անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական «900018001876» հաշվեհամարին:

Միաժամանակ տեղեկացնում ենք, եթե մինչև 2023թվականի դեկտեմբերի 26-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված գումարները, ապա Սոնիկ Երիցյան Աշոտի ԱՁ-ն չի ներառվի գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները մինչև 2023թվականի դեկտեմբերի 26-ը ներառյալ ներկայացնել ՀՊՏՀ-ի գնումների բաժին:

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով՝ կկիրառվի ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Ռեկտոր՝ _____ **Դ. Գալոյան**

Կատարող գնումներ համակարգող
Գոհար Թադևոսյան հեռ.593-483